ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԳՅՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ՄԵՐԳԵՅ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղահրամանյան.

Ի պատասխան Ձեր՝ 24.10.2017թ. հ.Ե-9/26 գրության՝ Զաքարիա Քանաքեռցու փողոցի աջ հատվածում գտնվող կանգառի կետը տեղափոխելու մասին, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության մասնագետների կողմից տեղում ուսումնասիրվել են Ձեր կողմից գրությամբ բարձրացված խնդիրները և ներկայացված առաջարկությունների իրականացման նպատակահարմարության և հնարավորության հարցերը: Գրությամբ նշված հատվածում տրանսպորտային միջոցների շարժման թույլատրելի առավելագույն արագության և դրա հսկողության իրականացման հարցերի վերաբերյալ հարկ է նշել, որ անմիջապես խնդրո առարկա ճանապարհահատվածում տեղադրված է արագաչափ սարք (ինչը երևում է նաև Ձեր կողմից ներկայացված գրությանը կից լուսանկարում), որը նախատեսված է 40 կմ/ժ-ը գերազանցող արագությունը ֆիքսելու համար, իսկ թույլատրելի և փաստացի արագությունների 10 կմ/ժ-ի չափով տարբերությունը հաշվի է առնված գործող օրենսդրությամբ և իրենից ներկայացնում է նշված արագաչափ սարքի սխալանքի թույլատրելի մեծությունը:

Ինչ վերաբերում է կանգառագոտու հետիոտնային անցմանը մոտ լինելու հանգամանքով պայմանավորված կանգառի տեղափոխման առաջարկությանը, ապա այն ընդունելի չէ, քանի որ առավել նպատակահարմար է գտնվել առաջարկել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը քննարկելու հետիոտնային անցումը մոտ 20 մետրով տեղափոխելու հնարավորությունը: Այս առնչությամբ համապատասխան առաջարկությամբ գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ